	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
IDBank	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ – ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՎԵՐ – ՔԱՐՏԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Հավելված
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2018 թվականի հունիսի 18-ի N248-L որոշմամբ

N	*Ծառայության տեսակը*	MasterCard Standard	MasterCard Gold
1.	Քարտի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎրո, ռուբլի ըստ հաճախորդի ցանկության	ՀՀ դրամ,ԱՄՆ դոլար,ԵՎրո,ռուբլի ըստ հաճախորդի ցանկության
2.	Քարտի թողարկում (տրամադրում)	անվճար	անվճար
3.	Քարտի գործողության ժամկետ	60 ամիս	60 ամիս
4.	Նվեր – քարտի տրամադրում՝ ըստ ներգրավման պահին ավանդի մեծության*	Մինչև 10,000 ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք այլ արժույթ	10,001-ից ավել ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք այլ արժույթ
5.	Քարտերի չնվազող մնացորդ	-	-
6.	Քարտային հաշվի տարեկան սպասարկման վճար (քարտի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար՝ անկախ ավանդային պայմանագրի գործողության ժամկետից)	անվճար	անվճար

* <u>Տրամադրման պայմանները</u>

- ✓ Նվեր – քարտերը տրամադրվում են ավանդատու և պարտատոմս ձեռք բերող ֆիզիկական անձ հաճախորդներին:
- ✓ Եթե ավանդը ներգրավելու և/կամ պարտատոմս ձեռք բերելու պահին (պայմանագիրը կնքելիս) անձը հրաժարվել է նվեր – քարտից, սակայն հետագայում՝ ավանդային պայմանագրի գործողության ժամանակահատվածում, ցանկանում է ստանալ նվեր – քարտ, ապա նվեր – քարտը տրամադրելիս հիմք է ընդունվում քարտի դիմումի ներկայացման պահի դրությամբ ավանդի և/կամ պարտատոմսի մեծությունը:
- ✓ Ըստ հաճախորդի ցանկության՝ հաճախորդին կարող է տրամադրվել ավելի փոքր գումարի ավանդին համապատասխան քարտատեսակ՝ համաձայն վերը նշված սանդղակին:
- ✓ Եթե հաճախորդը ունի մեկից ավել ավանդ կամ տարբեր տրանշերով թողարկված պարտատոմսեր, ապա կարող է ստանալ նվեր – քարտ՝ ըստ յուրաքանչյուր ավանդի և/կամ պարտատոմսի, ինչպես նաև ըստ հաճախորդի ցանկության կարող է տրամադրվել ավանդների և/կամ պարտատոմսերի հանրագումարին համապատասխան նվեր-քարտ համաձայն վերը նշված սանդղակի:
- ✓ Եթե հաճախորդը ունի և՛ ավանդ, և՛ պարտատոմս, ապա կարող է ստանալ տարբեր նվեր-քարտեր:

- ✓ Եթե հաճախորդը մինչև նվեր-քարտի ժամկետի ավարտը կորցնում կամ վնասում է նվեր-քարտը, ապա.
    - վերաթողարկվում է անվճար, եթե բանկում ունի գործող ավանդ և/կամ պարտատոմս
    - վերաթողարկվում է Բանկում գործող սակագներով, եթե դիմումը ներկայացնելու պահին չունի ավանդ և/կամ պարտատոմս (դիմումի վրա հարկավոր է կատարել նշագրում)
    - հաճախորդի ցանկությամբ դադարեցվում է քարտի գործողությունը:
- ✓ Ավանդատուների կամ պարտատոմսեր ձեռք բերող հաճախորդների նվեր-քարտերի ժամկետի ավարտին վերաթողարկման գործընթացն իրականցվում է հետևյալ պայմաններով.
    - Նվեր-քարտի վերաթողարկման ժամանակ, եթե որևէ պայման չի փոփոխվել, ապա քարտը վերաթողարկվում է նույն պայմաններով:
    - Վերաթողարկման ժամանակ, եթե գումարը չի համապատասխանում նախորդ քարտի գումարային մեծությանը, ապա վերաթողարկում չի իրականացվում և տրամադրվում է նոր նվեր-քարտ վերը նշված սանդղակի համապատասխան քարտատեսակով:

- Քարտի և դրանով իրականացվող գործարքների մնացած սակագները՝ համաձայն Բանկի գործող սակագների:
- Քարտի թողարկումն իրականացվում է 2-5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վարկային գծի/ վարկի տրամադրման որոշումը Բանկի կողմից կայացվում է առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: